ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հուլիսի 2026թ. թիվ 482-Ա

Ս.ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի մայիսի 15-ի թիվ 316-Ա որոշումը և հաշվի առնելով Ս.Ավդալյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեղովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սուսաննա Ավդալյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մի մասը 2026 թվականի հուլիսի 20-ից 29-ը ներառյալ՝ 8 աշխատանքային օր:

2. Ս.Ավդալյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեղովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեղովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Անահիտ Պետրոսյանին:

3. Ս.Ավդալյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հուլիսի 30-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-07 16:53:26 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հուլիսի 7
ք.Վանաձոր